

«ՏԵՍԻԼՔ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ»

Այս խորագիրն է կրում Մայր Աթոռի միաբան Ներսես Վանականի (Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյան) բանաստեղծությունների ժողովածուն, որն այս տարվա փետրվարին լույս աշխարհ է հանվել Վենետիկի Ս. Ղազարի տպարանից և որդիական համեստ տուրք է՝ նվիրաբերված հեղինակի ծնողների՝ Մաքրուհի և Գրիգոր Պոզապալյանների անմոռանալի հիշատակին: Մի բան ճիշտ է՝ ձեռակերտ հուշարձանները ժամանակի ընթացքում ավերվում են և անհայտանում, գրքերը շատ երկար են ապրում, նրանց մահ չկա:

Լավ էին ասում հները. «Գիրս մնայ յիշատակող...»:

Բայց «Հավերժական տեսիլքների» խորհուրդը միայն այս չէ: Հատորում ամփոփված ընտիր քերթվածները ունեն գեղարվեստական որոշակի արժեք նույնպես: Նրանք հոգևոր սնունդ են տալիս ընթերցողի մտքին ու երևակայությանը:

Կոչումով լինելով բանասեր և հայրենի գրականության շահերին նախանձախնդիր՝ մեր հետազոտական առօրյայում, տարիների ընթացքում, հետաքրքրվել ենք նաև Մայր Հայրենիքում և Սփյուռքում, մենաստանների հովանու տակ ծաղկող քերթությամբ և անկեղծորեն ոգևորվել, երբ լույս աշխարհ եկած այդ մեծ ու փոքր գրքերի մեջ գտել ենք թարմ խոսքեր: Բայց, պիտի խոստովանել, միշտ չէ, որ կարճ ու երկար հանգաբանությունների հավաքարանները գոհացրել են մեզ իրենց բանաստեղծական մակարդակով և կանոնավոր հայերենով:

Ներսես Վանականի գիրքը մեզ համար անակնկալ էր և՛ հղացումով, և՛ ստեղծագործական արդյունքներով:

Դա երևում է նախ և առաջ քերթվածների խիստ ընտրությունից և նպատակային դասավորությունից:

Գիրքը ծավալով մեծ չէ, բաղկացած է ընդամենը քառասունհինգ բանաստեղծությունից (ավելի ճիշտ՝ 48 ոտանավոր և մեկ պոեմ)՝ տրոհված չորս բաժնի և հորինված շուրջ երեք տարում, 1986 թվականի փետրվարից մինչև 1988 թվականի նոյեմբերն ընկած ժամանակաշրջանում, երբ աշխարհի ու, անգամ, մեզ համար, շատ առումներով՝ նոր կողմերից բացահայտվեց մեր ազգային բնավորությունը, երբ հրապարակային կոչերն ու թեժ պայքարն իրենց հրամայականներով ու կարգախոսներով լուրջ տեղաշարժեր առաջ բերին Մայր Հայրենիքի ու Սփյուռքի և ազգի ու Եկեղեցու կյանքում, ազգային միավորման ու հայության ոտնահարված իրավունքների ճանաչման, արդարության ու գթասրտության, վերածնության ու աշխարհաշինության ճանապարհներին: Հատորում հանդիպում ենք նաև ավելի վաղ՝ 1965 («Հերոսական»), 1973 («Արարչություն»), 1977 («Նրան»), 1980 («Սփոփանք») և 1985 («Հովվական») թվականներին հյուսված մեկական բանաստեղծություն, որոնք սակայն, բեկորներ են Ներսես Վանականի անցած քսան և ավելի տարիների ստեղծագործական աշխատանքի, որի առարկայական արտահայտությունները նա հարկ չի համարել պահպանել ու ժողովրդականացնել, նաև վկայություն, որ արևմտյան հայերենի ընտիր ձևերով համեմված արևելահայերենին նա փարել է վաղուց, իր գրական ուսումնառության առաջին քայլերից:

Ինչպես գրքի խորագիրն է խորհրդանշական՝ «Տեսիլք Հավերժական», այնպես էլ չորս ստորաբաժանումներինը՝ «Ճրագ Հավատոց», «Հող Հայրենի», «Հովվական» և «Մտքի Թևերով»: Ու բոլորի քնարական հերոսը միևնույն անձն է՝ մերթ երիտասարդ վանական, մերթ էլ կյանքի դառը

փորձություններով անցած կրոնավոր-քարոզիչ, որը Հավատի, Հույսի և Սիրո սերմեր է ցանում մարդկային հոգու խոպան անդաստաններում՝ ազգային մշակույթի ու քաղաքական պատմության վեհ անձերն ու անցքերը ծառայեցնելով սերունդների բարոյական ու հոգևոր դաստիարակության սուրբ գործին, իր ներքին կարոտներն ու տագնապները, իր երկընտրանքներն ու տատամսումները կիսում ընթերցողի հետ՝ բնավ չկարողանալով գոհացուցիչ պատասխաններ գտնել հավերժական հարցմանը և Հոգու ու Մարմնի անվերջ կռվին.

Մերթ ելնում եմ վեր, երկինք,
Սրբության հետ հաղորդվում,
Մերթ իջնում եմ վար, երկիր,
Հոգիս տիղմին թաթախում...

Երբեմն, թեթև ու անհոգ
Սավառնում եմ երկնքում,
Կարծես, լինեմ մի հրեշտակ
Անմեղ, թեթև, թափանցիկ:

Մտածում եմ, մոլորվում
Եվ պատասխան չեմ գտնում ...

Վայելքն էլ է մի հեշտանք,
Զգացական մի պատրանք՝
Հոգին խունկով պարուրող,
Մարդուն հույսով օրորող...
(«Մի՛ մերձենար յիս...»)

Եվ մեղանչումների ու տարակուսանքների անվերջանալի ճանապարհին է, որ նրա հոգու երկնակամարում առկայծում է հուսո աստղը, ամրապնդվում համոզումն ու հավատը՝ կանգնեցնելով նրան հաստատուն գետնի վրա.

Ներելով է, որ քավում ենք մեղքերը մեր,
Եվ մեռնելով վասն հայրենյաց՝ նոր ենք ծնվում,
Անմահության երջանիկ կեանքն ենք ժառանգում...
(«Աղերս»)

Հավերժական տեսիլքները, որպես այդպիսիք, ցոլանում են ժողովածուի բոլոր բաժիններում, իսկ վերջիններից յուրաքանչյուրն, իր խորհրդապաշտական խորագրից բացի, ունի իր ներքին, կուռ կառուցվածքն ու տրամաբանական ընթացքը, իր գերիշխող գաղափարը, որոնք, ի վերջո, վերածվում են ընդհանուր նպատակաուղղվածությամբ միմյանց հետ կապված, միմյանց լրացնող բանաստեղծական շարքերի:

«Ճրագ Հավատոյի» թեման քրիստոնեության լույսով Հայաստանը վերածնելու, հայության առտնին կյանքն ու ճակատագիրը արմատապես հեղաշրջելու ուղղությամբ, Չորրորդ դարի հենց սկզբներին, ձեռք բերված խոշորագույն արդյունքն է՝ Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրումը, որի խաղացած դերը ինչպես հին, այնպես էլ նոր դարերում, անչափելի է: Արդարացի է բանաստեղծը, երբ ասում է.

Նա չեղավ լոկ ամրախարիսխ ու նյութեղեն մի կերտվածք,
Նա եղավ այուն, ոգու տաճար, մի նոր կյանքի կանչող տապան ...
(«Տեսիլք Հավերժական»)

Ուշադիր քննության դեպքում այս ներբողի մեջ դժվար չէ նշմարել Էջմիածնին նվիրված հնօրյա շարականի ցոլքերը, որոնք օգտագործված են նրբին ճաշակով, իբրև լեզվական մանրամասներ կամ բառքանդակներ՝ դարաշրջանի շունչը պահելու և առավել պանծացնելու համար այս սրբարանի անունն ու դերը աշխարհում ու ազգի կյանքում:

Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա,
Զայնք հընչեցին Սանդարամետք անդընդոց ...

Դարեր ու դարեր երգել են Էջմիածնի Մայր տաճարի կամարների տակ, երգել են ու քաջալերել միմյանց թե՛ կրոնավորներն և թե՛ աշխարհականները՝ նվիրվելու ազգային լուսավորության կենսական խնդրին:

Եկա՛յք, շինեսցուք սուրբ ըզխորանընն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեսց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի ...

Ներսես Վանականը վերարծարծելով հենց այս հնօրյա պատգամը՝ ծավալում է իր նոր մեղեդին հանդիսավոր ու բազմալար, որի վերածնողը, կարծես, միջնադարյան հայոց ձեռագիր մատյանների մանրանկարները դիտի, այնքան ընկալելի են և առարկայական.

Լույսն առավել պայծառացավ, կարծես, բացվեց մի պատուհան
Երկնի վրա լուսապայծառ, և այդ լույսի հեղեղի հետ
Իջավ աշխարհն Այրարատյան Աստվածորդին ոսկեպսակ,
Աստվածորդին այն փառահեղ, պերճ զգեստով՝ ոսկի արծաթ,

Բեհեզներով ազնվական, հազար սկամբ՝
զմրուխտ, հակինթ,
Իջավ աշխարհն Այրարատյան ու իր ձեռքի
ոսկի ուռամբ
Բախեց գլխին ժանտ վիշապի, Սանդարա-
մետը դղրդաց,
Եվ աստվածներն հին կրոնի ու մազդեզի
վառ ատրուշանք
Դարձան մոխիր ու ավերակ, դարձան
անցյալ ու հիշատակ ...
(«Տեսիլք Հավերժական»)

Էջմիածնի խորհրդին հետևում է ընդամենը մեկ դար անց տեղի ունեցած՝ մեր պատմության երկրորդ մեծ խորհուրդը՝ Հայոց գրերի գյուտը Մեսրոպ Մաշտոցի հանճարով: Այս հավերժական տեսիլքն ևս վերարտադրված է բանաստեղծական ինքնուրույն խոսքով՝ դիմելով հարցում-պատասխանների, քնարական զեղումների, խորախորհուրդ տեսիլքների:

Ամենահուզիչ դրվագն այս բաժնի՝ Տիրամոր ձոնված ներբողանն է, օրինակելի իր կատարման մեջ: Քրիստոնեական աշխարհի ամենագթառատ էությունը մեր բանաստեղծին ներկայանում է բացառապես հողանյութ ձևերի ու արտաքին բարեմասնությունների միջոցով, որոնց օգնությամբ ու, միաժամանակ, երևակայական ուժով՝ ընթերցողն իր կարելիությունների սահմաններում վերստեղծում է Տիրամոր աստվածային ներքինը, նրա բարի հոգին՝ բնության մեջ ու բնության հետ զուգորդված, երբեմն՝ Գրիգոր Նարեկացուն օգնության կանչելով, բայց ո՛չ նրան կրկնելով, որովհետև նման հարցերում Գրիգոր Նարեկացին (ինչպես Պետրարկան՝ եվրոպական ազգերի համար) հավերժական ուսուցիչ է, և վա՜յ այն աշակերտին, որը քննություն հանձնելիս ձախողվում է ...

Ներսես Վանականը, և այդ մենք ընդգծում ենք, պատվով է դուրս եկել քննությունից՝ ծավալելով իր նոր, նուրբ ու քնքուշ մեղեդին.

Գեղեցկություն լուսաշող ...
Աչքեր ծավի, ծով ծիծաղ,
Քաղցրահնչյուն մեղեդի,
Լույս հորիզոն հույսերի:

Ունքեր՝ կամար հրեղեն,
Գալիք փառքին դիմավոր,
Գունեղ գոտի ծիրանի,
Կյանք ու երազ՝ կողք-կողքի:

Ծուրթեր՝ թերթեր վարդերի,
Ցողով շաղված վաղորդյան,
Ո՛չ մի խոսք դեռ չի եղծել
Կուսական գեղն սաղարտել:

Այտեր՝ մարմար լուսերանգ,
Մերմակ, մաքուր, թափանցիկ,
Ու իբրև կյանք ու խայտանք
Փթթող ժպիտդ է շոյանք:

Չկա շպար երկրային
Համեմատվող քո գեղին,
Աստվածային քո տեսքին,
Քո կատարյալ էության:
(«Տիրամայր»)

Առաջին բաժնի, ինչպես և ժողովածվի ամենաձավալուն երկը «Ավանդ Հավերժական» վիպասքն է՝ Գրիգոր Լուսավորչի գործունեության և Խոր Վիրապի հետ կապված հրաշքների մասին: Եվ մեր հեղինակի գրչի տակ մարմին առած այս նոր կերպարը մի որոշ առումով հիշեցնում է հայոց ազգային վեպի հերոս Սասունցի Դավթին, որի դեմ նույնպես ասզոր է Չարը՝ իր նյութած բոլոր խարդավանքներով: Ներսես Վանականի վիպասքում էլ, հերթական փորձություններից հետո, իսկ դրանք բավականաչափ շատ են (և շատերին հայ ընթերցողը արդեն ծանոթ է «Ագաթանգեղյա պատմությունից» հին մատյանից, Խորենացու պատմագրքից ու վարքագրական հուշարձաններից), կրկին հայտնվում է Անակի որդի Գրիգորը և ձայնում. «Կենդանի եմ...», հարկավ, բարոյական ու հոգեկան իր զորությունն ստանալով Փրկչից:

Հայոց պատմության այս շրջադարձային ժամանակներին անդրադարձել են անցյալի ուրիշ բանաստեղծներ էլ: Օրինակ՝ Յովհան Միրզա Վանանդեցին մի վիթխարի պոեմ է շարադրել՝ «Արտիական Հաստատանի» խորագրով՝ բաղկացած շուրջ 10.000 երկարաշունչ տողից և տպագրված Կ. Պոլսում, 1836-ին: Բայց այն դժվարամարս ու խրթին լինելու պատճառով անընկալելի մնաց ու մոռացվեց:

Ներսես Վանականի նոր վիպասքը զգաստ մտքի ծնունդ է: Թեպետ այս պատումի հիմքում ևս հնօրյա լեգենդներն ու հրաշագործություններն են ընկած, բայց ասավել տաք գույներով և իրականության ու հրաշքների պատշաճ զուգորդմամբ՝ կապելով դրանց նաև հայոց հոգևոր կյանքում սկիզբ առնող տեղաշարժերի գալիք հեռանկարները:

Խոսուն խորագիր ունի ժողովածվի երկրորդ բաժինը՝ «Հայրենի Հող»: Այս շարքում ընդգրկված բանաստեղծություններն ևս կոչված են որոշելու գրքի դիմագիծը՝ առնելով այն որոշակի շրջագծի մեջ: Հեղինակի ուշադրության կենտրոնում հիմա էլ հայ ժողովրդի քաղաքական պատմու-

թյունն է, հանուն գոյատևման մղած պայքարի դրվագները, պայքար անվերջ, ճակատագրական ու օրհասական.

Գողգոթայի արյան լճից
Բողբոջեցին կարմիր վարդեր,
Ըմբոստացավ Հայը կրկին
Ո՛ւ մաքառեց, ո՛ւ ծառացավ
Դահիճների ու մահվան դեմ ...
(«Հերոսական»)

Ներսես Վանականի հերոսները, բացառությամբ մեկի, անանուն են՝ հայդուկներ ու կամավորներ, տարագիրներ ու զոհեր, որոնք մարտնչել ու տոկացել են Վանում ու Զեյթունում, Տարոնում ու Սասունում, Մուսա Լեռան բարձունքներում և Տեր Զորի շիկացած արևի տակ: Այս շարքի բանաստեղծությունների մեջ, հաջորդաբար, ներբողվում են նաև Հայաստանի բնության հրաշք կոթողները՝ Արագածը, Արարատը, Սևանը, և բոլորի հետ՝ մի անմահ անուն, ազատ Լեռների արծիվ, զորավար Անդրանիկը: Հեղինակը բանաստեղծական կերպարանք է տալիս տասնամյակներ շարունակ փայփայվող մի համազգային բաղձանքի՝ Արարատյան դաշտում, Մասիսների դիմաց, հայրենի հողին վերջապես պահ տալու Անդրանիկի հերոսական ազատը՝ օտար ափերից տուն բերելով և հայ քաջորդուն վայել արարողությամբ հավիտենական ճանապարհ դնելով նրան:

Օտար հողում վաթսուն տարի
Բավ է ննջես վտարանդի.
Ե՛կ, տո՛ւն դարձիր, հերո՛սդ արի,
Վրեժդ արդար Հայոց ազգի ...
«Պանդուխտ քաջին»

Հազիվ թե հապաղելն այլևս առաքինություն կամ դիվանագիտական նկատառում համարվի:

Ժողովածվի վերջին բաժիններն, ըստ էության՝ խառը բանաստեղծություններ են ամփոփում, որոնք, մասամբ, կրկնում են արդեն ծանոթ գույներն ու մեղեդիները, մասամբ էլ վերարտադրում քնարական հերոսի պաշտոնական ուղևորությունների ու պարտականությունների կատարման կարճատև միջնարարներին Հայաստանի ճարտարապետական հին հուշարձաններից՝ կանգուն ու ավերակ վանքերից ու մենաստաններից և հայրենի բնության գողտրիկ անկյուններից ստացած անջնջելի տպավորությունները, որոնք բանաստեղծի գրչի տակ վերաճում են քնարական օրագրությունների՝ ուշագրավ խորքով ու, մերթ էլ, այլաբանական բովանդակությամբ.

Սարերի վրա մի արծիվ խաղաղ
Ճախրում է հպարտ, շուրջպար է անում,
Թևերն երկնքի ամպին է քսում
Ու սուրում թափով, ձորերն է չափում:

Զմրուխտ սարերից զեփյուռն է բերում
Բյուր առվակների կարկաչն ըղձալի,
Անդին գառներն են մայում, թռչկոտում,
Բզեզ ու ճպուռ կյանքն են գովերգում:

Քիչ հետո հանդարտ սև ամպն է գալիս,
Որոտում, հորդում հեղեղի նման.
Սև ամպի տակից արևն է շողում,
Երկինքն իր ճակտին կապում ծիածան:
(«Գեղարդի ճամփին»)

Եվ այսպիսի ավարտուն ու ընտիր քերթվածները քիչ չեն գրախոսվող ժողովածվում, որ և հեղինակի ստեղծագործական անվիճելի նվաճումն է:

Նկատենք նաև, որ բավականաչափ լայն է վերջին բաժինների տարածական շառավիղը, հարկավ գեղագիտական ուռումով: Հեղինակի ապրումներին ու տրամադրություններին սնունդ են տվել ո՛չ միայն Հայաստանի վայրերը, այլև Լեմանը, Լոնդոնը, Ասսիզը, որոնք նորօրյա հույ վանականի ներշնչումների ակունքները բացահայտելուց բացի, ունեն նաև ճանաչողական նշանակություն:

«Տեսիլք Հավերժականը» ձևավորված է զուսպ ու ճաշակով: Շապիկի նկարը մի դրվագ է ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանի «Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը» գոբելենից, որի բնօրինակը զարդարում է Էջմիածնի Վեհարանի ընդունարանի հյուսիսային պատը: Ժողովածվի ընդհանուր գաղափարը և Խանջյանի ստեղծագործության ոգին այդ առումով դաշն են միմյանց հետ:

Գրքում մեկ-երկու տեղ նկատվում են ուղղագրական զույգ ձևերի համազոր կիրառության օրինակներ (ճամփա-ճամբա, բարդի-բարտի), երկու վրիպակ՝ կնքուղ, ամբ (պետք է լիներ՝ կնգուղ, ամպ), ու մի քանի անհարթ տողեր, որոնք, կարծում ենք, հեղինակն ինքն արդեն նկատած կլինի և կուղղի քերթվածների հետագա հրատարակությունների մեջ, իսկ սույն ժողովածվի շատ էջեր դրան արժանի են:

Պ. ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր